ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 հունիսի 2024 թվականի թիվ 61-Ա

ք.Երևան

«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2024 թվականի ապրիլի 29-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 20 վարչական վարույթի նյութերը, պարզեց.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս «ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «Ֆորտունա» տեսալսողական ծրագրի 2024 թվականի ապրիլի 24-ի տեսագրության մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել է Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների պահանջի խախտման փաստ:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2024 թվականի ապրիլի 29-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ 2024 թվականի ապրիլի 29-ին կազմված արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ արձանագրության՝ Հեռարձակողի՝ «ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «Ֆորտունա» տեսալսողական ծրագրի 2024 թվականի ապրիլի 24-ի տեսալսողական հաղորդումների ընթացքում հեռարձակվել է գովազդ, մասնավորապես 09:51:21-09:51:52, 13:55:58-13:59:01, 14:50:57-14:52:07, 15:56:44-16:00:14, 16:20:55-16:21:31, 16:59:40-17:01:56, 17:58:47-17:59:57, 18:51:44-18:54:29, 19:20:37-19:23:03, 19:50:21-19:54:17, 20:56:16-20:59:57, 21:23:11-21:28:46, 22:35:31-22:39:55 և 23:23:14-23:26:32 ժամերին:

Վերոնշյալը պարունակում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի խախտման հատկանիշներ, այն է՝ ***պետության հայտարարած սգո և հիշատակի***

օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը Հեռարձակողների կողմից արգելվում է:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2024 թվականի ապրիլի 30-ի թիվ Ե/04/04.1/359-24 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրության և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ պարզաբանումներ և բացատրություններ չի ներկայացրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», **«Գովազդի մասին» օրենքները,** Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է սույն օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, **իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը** սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է ապրիլի 24-ին:

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը Հեռարձակողների կողմից արգելվում է»:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դրույթների պահանջները՝ Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողը տեսալսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի առանձնահատկությունները սահմանող դրույթները:

Փաստենք, որ Հեռարձակողը 2021 թվականի հունվարի 21-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ Լոռու մարզ) և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում պարտավոր էր պահպանել **Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով** սահմանված դրույթի պահանջները:

Հանձնաժողովը սույն խախտումն արձանագրելիս կարևորում է նաև այն հանգամանքը, որ պետության կողմից օրենքներով սահմանված սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը կապված է նաև հանրության շահի հետ, որը տվյալ դեպքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի նաև այս տեսակ տուրք մատուցելն է՝ սգո օրը զվարճալի հաղորդումներ և գովազդ հեռարձակելուց զերծ մնալը, և Հեռարձակողը, հանդիսանալով Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, պետք է տեղյակ լիներ Օրենքի վերը նշված դրույթի մասին և պահպանել այն:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ Հանձնաժողովն ամրագրում է, որ «ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «Ֆորտունա» տեսալսողական ծրագրի տեսալսողական հաղորդումների ընթացքում 2024 թվականի ապրիլի 24-ի՝ պետության կողմից հայտարարած սգո և հիշատակի օրը հեռարձակվել է գովազդ:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից

իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդ և զվարճալի հաղորդումներ հեռարձակելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Այսպես, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով, 14-րդ հոդվածի 7-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերով, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ և 9-րդ մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 5-րդ հոդվածով և հիմք ընդունելով Օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց՝**

1. «ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

20 հունիսի 2024թ.
ք.Երևան